№ 11 ԹԵՀՐԱՆ ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼ 1

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԵՀՐԱՆ ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼ 1 № 11

«ՇԱՒԻՂ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россiйской ИМПЕРАТОРСКОЙ Миссiи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչեւ 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով խմբագրակից բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակները, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հարկաւո՞ր է մեղմ լինել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Սալմաստից. Նամակներ Խոմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԱՐԴԱԲԻԼ։

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԵՂՄ ԼԻՆԵԼ

III

Մեզ մեղմ լինելու խորհուրդներ են տալիս, երբ մենք մանրակրկիտ հետախուզութիւնից յետոյ, ոչ մի կողմ մաքուր չենք գտնում։ Ամէն քաղաք ուր կայ Պարսկահայի մի որոշ բազմութիւն, կան և ցեցեր, որոնք գրաւել են հասարակական մարմինը և անխնայ ոչընչացնում նրան։ Աւերածութիւնը այն աստիճանի է հասել, որ սուր, կտրուկ հարուածներ են հարկաւոր նրանց դէմն առնելու համար, իսկ մեղմութիւնը աւելի քան վնասակար արդիւնք կարող է ունենալ։

Տեսանք Դավրէժը. նրանից յետոյ ամենաբազմամարդ հայաբնակ կեդրոնն է Սպահանի նահանգը, որ այժմ բարձր թողի արած Եսայի եպիսկոպոսից, գտնվում է մի երկու հատ անտաշ քահանաների ուղեղներից բղխող, եթէ ոչ վնասակար, գոնէ երբէք օգտակար՝ գործունէութեան դիմաց։ Առաջնորդը տարիներից ի վեր նստած այնպիսի կեդրոնում, ուր իրենից նախկինների արած աւերածութիւնները նորոգելուց յետոյ հարկաւոր էր շատ կեղտ մաքրել—այդ պարտականութիւնների տէր պաշտօնեան՝ ոչինչ չէ անում եթէ ոչ եղած կողոպտող, գերփող քահանաների վրայ աւելացնելով ուրիշներն էլ։ Դիզեց նա հարստութիւն իր ունեցած հարստութեան վրայ և այժմ գնաց Հնդկաստանումն էլ իր գանձարանի համար եկամուտներ փնտռելու։

Այդ էլ մի կողմ, Էջմիածնից ուզում է նա փոխանորդ, ապա նրա հետ կըռվելով սկանդալներ սարքում և հուսկ ուրեմն ուղարկում է նրան Թէհրան նստելու և Սպահանի ազգային թեմը, աւելի քան երբէք վիրաւոր՝ խաղալիքի զոհ դարձնելու մի քանի քահանաների ձեռքում։

Մեղմ լինել կամ լռել այդպիսի ցաւերի առջև։

Իսկ ինչպէս վարւել դեռ ևս Թէհրան եկող նստող վարդապետի վերաբերութեամբ. լռե՞լ նրա քմահաճոյական անտակտ և մինչև իսկ ծիծաղելի գործունէութիւնը տեսնելով. առանց ուևէ ժողովի, կամենալով ազգ. հոգաբարձութիւն ընտրել, ապարէզ է հանում անընդունակ անձեր. կամենալով «միութիւն» հաստատել, աւելի լարում է կուսակցութիւնները մէկ մէկու դէմ և շրջապատվում է այնպիսի անձերով, որոնց կարելի է մի ընդհանուր անունով կոչել «հասարակական ճանճեր»։

Այսօրւայ համարի մէջ տպւած «Նամակ խմբագրութեանը» և մի լուրը բաւական պերճախօս են ապացուցանելու, որ լինել մեղմ այդպիսի փաստերի ներկայութեամբ՝ կը լինէր ոչինչով չը զանազանւել շողոմ և հասարակութեան շահերից անձնական օգուտ միայն որոնող՝ թերթերից։

Դավրէժից, Սպահանից և Թէհրանից յետոյ՝ Ուրմիան է գալիս. «Շաւիղ» ի՞ր մի ընթերցողը անգիտակ մնաց այնտեղ եղող առաջնոր. փոխանորդ. Փոկուսնիկ քահանայի արածների մասին։ Իսկ Խոյում, Սալմաստումն էլ արդէն Վեհունին ու Աւետիսեանն իրենց շալկայով երկիրն են քարուքանդ անում. մնում է Մարաղան. այնտեղ էլ պակաս չեն ցեցեր. մի ինչ որ Փալ բացանող, անտաշ ու կոշտ, անկիրթ ու անպէտք ուսուցիչ, էլ օ՞յին չը մնաց որ չը հանէր հասարակութեան գլխին և չ'ապականէր ապագայ սերունդը։

Սերունդներ ապականելու գործը, ասենք, շատ խղճմտանքով է տարվում մեր մէջ. Մարաղան իր Փալչի ուսուցիչով, Սալմաստը իր կրթական տեսուչով և «բալթալ» ուսուցիչներով և Թէհրանը իր Գասպարեան կոչւող աշխարհաշակ խալֆայով՝ երրորդութիւն կազմած, ո՛չ միայն մի սերունդ, այլ և մի քանի սերունդ պատրաստում են խաւարասէր, անմիտ և փչացած հասարակութիւն որ անշուշտ կեղծութեան, ստի և խաբեբայութեան մէջ միայն պիտի որոնի իր գաղափարները։

Ելի՞ մեղմ լինել։

Ամփոփենք այժմ և տեսնենք ուրեմն, թէ ինչ տեսակ երևոյթների առջև ենք գտնվում։

Դավրէժն ունի իր Սուքիաս եպիսկոպոսը։

Սալմաստը—Արսէն վարդապետ Վեհունի, Մ. Աւետիսեան և ընկերութիւն։

Ուրմիան—Գարեգին քահանայ և իր Փոկուսները.

Մարաղան—իր Փալչի ուսուցիչը.

Սպահանն—իր անտէր գործերը և այդ անտէրութիւնից օգտւող կողոպտիչները։

Եւ Թէհրանը՝ իր վարդապետը, իր նշանաւոր մանկավարժ Գասպարեանն ու «մեծ գործիչ», «ամենասքանչելի տղնութեամբ», այլ և «մարտիրոսութեան պսակ կրելու իրաւունք ունեցող» ազգային հերոսը...

Որ կողմ դառնում ես, նկատում ես որ մի սոսկալի ցանց իր մէջն է առել պարսկահային ամէն կողմից. ազգ. գործերից օգտւողներ, նրան խաղալիք դարձնողներ ասպարէզ են մտել և պարսկահայի կրթական, լուսաւորութեան, քաղաքակրթութեան գործը, որով և գոյութիւնը, թիւնաւորում են և այլասեռում։ Հարկաւո՞ր է ուրեմն մե՞ղմ լինել։

Ոչ երբէք, երբոր դրութիւնը սուր, շեշտւած դարմաններ են պահանջում քանի դեռ ուշ չէ։

Եւ մենք խօսում ենք այն անձերին, որոնք այդ կարևորութիւնը ըմբռնում են։ Եկէք մեր դրօշի տակ։ Նա ծանր է այո, այսպիսի մի հասարակութեան մէջ, բայց բռնենք նրան։ Հոսանքի հետ գնալը քաջութիւն չէ. մեծութիւնը հոսանքի դէմ գնալն է։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԴԱԲԻԼ

(ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ)

—

Արդաբիլը ընկած է մի լայն դաշտի վրայ, որը շրջապատված է արևմտեան և հիւսիսային կողմից Սաբէլին լեռներով. Նրանց միջից բարձրացել է միշտ ձիւնապատ Սաւալօն գագաթը, հարաւային կողմից Բաղրովի լեռներով իսկ արևելեան կողմից Կիրուէի կամ Ասատարի լեռներով։ Միջավայրում գտնւող դաշտավայրը 40 քառակուսի մղոն տարածութիւն ունի։

Քաղաքը շինւած է Սաւալօնի ստորոտից դէպի արևելք երկու մղոն տարածութեան վրայ, իսկ նրանից դէպի արևմուտք հեռու՝ հոսում է Սև ջուրը, Հայաստանի նշանաւոր գետակներից մէկը, որը թափվում է Երասխը Կալէի խառնուրդի մօտերում։

Արդաբիլն ունի 10,000 տուն, որոնցից 25-ը միայն հայեր են, իսկ մնացեալը շիա կոչւեցեալ Թիւրքեր։ Գաւառապետը նստում է Դավրէժում, իսկ իրեն յանձնւած գաւառները կառավարում է իր փոխանորդներով, որոնցից մէկը մնում է Արդաբիլ, իսկ միւսը Ահար՝ Ղարադաղը կառավարելու համար։ Արդաբիլի գաւառում կան և մի քանի ուրիշ խանութիւններ, որոնք յաճախ կռիւներ են յարուցանում իրար հետ և երբեմն էլ ապստամբվում գաւառապետի իշխանութիւնից. սրանցից նշանաւորներն են Ջահաւանները և Փոլադլինները, նոյնպէս և մի քանի մանր ցեղեր, որոնք բոլորն էլ վրանաբնակներ են։

Արդաբիլի հայերը ունին մի եկեղեցի և մի հարիւրամեայ ալեոր քահանայ, որի աչքերը զրկւած են տեսողութիւնից։ Ունեն միդասեանեան վարժարան, որտեղ ուսանում են 25-ի չափ աշակերտներ, ուսուցիչը մօտ տասը տարի է այստեղ է և իր լաւ վարմունքի պատճառաւ, վայելում է ժողովրդի համակրանքը. տղայոց վարժարանին կից է և օրիորդաց դասարանն 10 աշակերտուհով, որոց ուսուցանում է նոյն ուսուցչի կինը։ Տղայոց դասարանում անցնում են հայերէն, պարսկերէն, ռուսերէն լեզուները մի քանի այլ առարկաներով. իսկ օրիորդաց դասարանում անցնում են հայերէն, ձեռագործութեան. նոյնպէս և մի քանի այլ առարկաներ. վարժարանները համեմատելով տեղացիների բազմութեան հետ՝ նախանձելի դրութեան մէջ կարելի է համարել։ Կայ և ընթերցարան մօտ 200 գրքերով, բայց լաւ դրութեան մէջ չէ։

Չորս տարի առաջ մի քանի պանդուխտ երիտասարդներ միանալով տեղացի փոքրաթիւ երիտասարդութեան հետ, եկեղեցու բաղում հիմնել են թատրոնական սրահ և բեմ. հիմնադիրներն երկու տարու չափ եռանդուն կերպով աշխատեցին յաճախ տալով ներկայացումներ, բայց երբ հեռացան պանդուխտներից մի քանիսը, փակւեց նաև սրահի դուռը, իսկ ժողովուրդն այդ մասին ոչինչ չէր մտածում չը նայելով որ մեծ օգուտ էր սպասվում։ Այժմ լսում ենք, որ նորահաս երիտասարդութիւնը կամենում է կրկին բաց անել սրահի դռները և շարունակել ներկայացումներ տալ։

Արդաբիլում տարիներից ի վեր մեծ հաջակ է ստացած պ. Խ. Ջահրադեանը, որ վարում է ռուսաց փոխ-հիւպատոսի և վաճառականապետի պաշտօնը։ Պ. Ջահրադեանն է եղած տեղոյս եկեղեցու և վարժարանների հիմնադիրն. ամէն բոլէ սրա դռնում գտնվում են գանգատաւորներ թէ հայ և թէ թուրք. դուռը նմանում է մի դատաստանատուն և սա աւելի ազդեցութիւն ունի քան թէ կառավարիչը. այս պարոնից ակնածում են և բոլոր խանութիւնները. Արտաբիլի մի ճանապարհորդ երբ մի ձիապանի փոքր ինչ կոշտ խօսքերին վերջինս գոչում է. «Բարոնի ծառան եմ ինչպէս համարձակվում ես ինձ նեղացնել»։ Արդաբիլի հայերի մի մասը պարապվում է արհեստով, մի մասը յանձնարարութեամբ և մի փոքր մասն էլ գինեվաճառութեամբ։

Արդաբիլից դէպի արևելք 10 մղոն հեռաւորութեան վրայ, գտնվում է Աստարան իր գաւառակով։ Աստարաեա [illegible]

Գնանք առաջ, մաքրենք մեր հասարակական կեանքը նրան ապականող բոլոր տարրերից, երբէք մեղմ չը լինինք և եթէ կ'ընկնենք, թող ընկնենք մեր դրոշը ձեռքերնիս, և նրա տակը։ Վ. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՁԵՌՔ ՏԱՆՔ «ՇԱՒԻՂԻՆ»

—

«Շաւիղը» սկսել է նուիրուել պարսկահայերի հասարակական շահերին, անխընայ մտրակել նրա սխալ ընթացքը և այդպիսով տենդային իրարանցում է առաջացրել գլխաւոր հայաբնակ քաղաքներում։ Իրրև ապացոյց մեր ասածի, ահաւասիկ Դավրէժի հանրային կարծիքը, մի քանի չարամիտների գաղտնի չարախօսութիւններին հաւատ ընծայելով, անհեռատես ժողովուրդը «Շաւիղի» ուղղութիւնը հակաժողովրդական է համարում. «Շաւիղի»՝ որ այնքան ջերմեռանդութեամբ պաշտպանում է ժողովուրդի շահերն ու դատը՝ ընդդէմ ժողովրդի թշնամի մի որոշ կարգի։

«Շաւիղի» անցեալ և մանաւանդ այս տարւայ ուղղութիւնից պարզ երևում է, որ անթիւ արգելքներով շրջապատուած, ջանք է անում միշտ, որքան կարելի է, ճշմարտութիւնը երևան բերել և աշխատում է առաջնորդել ժողովրդին դէպի Պրոպատիկէ՝ ընդհանուր մարդկութեան լուսաւորութեան աւազանի շուրջը, որքան այդ իրենից է կախուած։

Մամուլը ժողովրդի զգացումների ճշմարիտ արտայայտիչն է. յաւ ի սիրտ պէտք է խոստովանել, որ հայոց մամուլի ներկայացուցիչներից շատերը հանգամանքների հետ յարմարելով, մամուլը ծառայեցնում են իրանց գծուծ անձնական շահերին. թեքվում, ծռվում են իրողութիւնների առաջ, շոյում փայփայում են ժողովրդի թոյլ կողմերը որից յայտնի օգուտ են սպասում. աչք են դարձնում, նորա ցաւերը չ'տեսնող ձևանում և իրանց շահի տեսակէտից՝ չխրտնեցնելու համար, ձեռք չեն դպցնում նորա ծուծ ու ոսկրին հասած ժահրոտ վէրքին. խորին հոմոզմունքով հաւատացած ենք, որ «Շաւիղը» շահի համար չի շոյելու. նա ճշմարտութիւնը ամեն բանից գերադասելով բարձր է պահելու նրան։

Եթէ անցեալ տարւայ «Շաւիղի» թղթակցութիւններից և լուրերից մի քանիսը տանց քէֆին կպել է, յանցանքը խմբագրութեանը չէ իմ կարծիքով և ոչ էլ թղթակցինը. դուք ասում էք, լուրերը շատ անգամ սուտ էին լինում. ինչու չէիք սուտ լուրը հերքում, չէ՞ որ խմբագրութիւնը յամենայն դէպս պատրաստ էր սուտի դէմ հիմնաւոր փաստերով, նոյն իսկ աղաւաղուած, աղջատուած գրած պատասխանը յանուն ճշմարտութեան հրատարակել. դուք չը կարդացիք, որ նա քանիցս հրապարակով զգուշացրեց իր թղթակիցներին անհիմն, սուտ՝ շինծու լուր չհաղորդել. հակառակ դէպքում, եթէ նորա թղթակցութիւններից երեքը հերքուի, այլ ևս նորա գրածները չեն հրատարակուիլ։ Ինչու չհերքեցիք։

Բանից դուրս է գալիս որ յանցանքը ձերն է. պարզ է որ դարերով սուտի և շողոքորթութեան մէջ մեծացած հային ծանր է երևում, երբ ճշմարտութիւնը երևան է հանվում։ Իսկ ինչ վերաբերում է այն թղթակցութիւններին, որ անձնաւորութիւնների հետ կապ է ունեցել, խմբագրութիւնը հրատարակել է այն հիման վերայ, որ նորան հաւատացրել են թէ այդ անձնաւորութեան գործերը խառն են հասարակական շահերի հետ. ապա թէ ոչ, նա անձնական կռիւների, վէճերի ասպարէզ չէր դառնալ։

Նա կը լինէր մեր ցաւերի ցաւակից անկեղծ կերպով, մեր ուրախութիւնների ուրախակից. նա կը լինէր մեր իղձերի թարգմանը, միևնոյն ժամանակ, կրկնում ենք, նա կարող կը լինէր ճշմարտութեան դրոշը բարձր և անաղարտ պահել։ Եւ եթէ լուսաւոր գաղափարներով տոգորուած երիտասարդութիւնը կը համախմբուի «Շաւիղի» շուրջը, անկեղծ կը վերաբերուի դէպի նա, յօգուտ ժողովրդի՝ ձեռք ձեռքի տուած կը գործի, այն ժամանակ յաղթութիւնն անսխալման նրանը կը լինի և կատարեալ կը լինի։

Ձեռք տանք ուրեմն «Շաւիղին». դուք, որ սիրում էք ժողովրդի բարեկեցիկութիւնը և այդ գաղափարի համար ճակատ տալ գիտէք՝ եկէք նրա պարզած դրոշի տակ, անկեղծ եղէք դէպի նա, մի կողմ թողէք անձնական կրքերն ու հաշիւները և ազնուութեամբ վերաբերուեցէք դէպի նրա պաշտպանած գաղափարները։

Ձեռք տանք «Շաւիղին», հայ երիտասարդներ....

Ա.

Դավրէժ.

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

—

6 մարտ 95

Առհասարակ Սալմաստում ամենայն գիւղ աշխատում է ունենալ առանձին ուսումնարան, չնայելով որ շատ գիւղեր բաղկացած են 50-60 տնից, որոնք սրա փոխարէն կարող էին մի Կենտրոնական ուսումնարան ունենալ, որտեղ յարելի կլինէր բերել տալ բարձր ուսման տէր ուսուցիչներ և ոչ թէ հիմիկուա նման «բայթալներ»։

Սրանում սալմաստցին բոլորովին մեղաւոր չէ, որ չունի ոչ մի կանոնաւոր ուսումնարան. այլ մեղաւոր են այստեղից այնտեղից «կապ կտրած փախածները», որոնք երկպառակութիւն սերմանելով Սալմաստի մի բուռ, այն էլ քայքայված ժողովրդի մէջ, իրանց քսակները լցնում են հարստահարուած խեղճ գիւղացու արդար քրտինքի վաստակ վ։

Եթէ խեղճ գիւղացին իրա կամքովը տալ կողէկները ուրիշ բան, այլ նրանցից առնում են սպառնալիքներով, այն էլ ինչ սպառնալիքներով. ինչ էք կարծում, ծեծելով կամ հարստութեան վնասելով--ոչ! Հակառակ դէպքում «սպանել» եթէ իրանց կամքը չեն կատարի։ Ի՞նչ անի խեղճ գիւղացին, եթէ ոչ հնազանդուել (առ հասարակ Սալմասում սպանութիւններ շատ են պատահում այդ «կապ կտրած փախածների» շնորհիւ)։

Այդ «պարոնները» ներկայանում են խեղճ գիւղացիներին երբեմն շատ մաքուր հագնուած, եւրոպական հագուստով, երբեմն ողորմութիւն հաւաքողի և երբեմն հոգևորականի։

Մօտ ժամանակներս քանի յօդուածներ Սալմաստից տպուեցին «Շաւղում», որոնք մանրամասն նկարագրում են Սալմաստի այժմեան դրութիւնը և մի առ մի մատնանիշ են անում այն ամէն դէպքերը որոնք առաջացել են այդ հացկատակների շնորհիւ. իսկ սրանց երեսի կաշին շատ հաստ է երևում, որ այդքան անարգանք լսելուց յետոյ, էլի չեն ամաչում. վերջապէս, էլ ինչ երկրացնեմ. այդքան անարգանք քարին տային, քարը կ'ճաքէր, իսկ երևակայէք սրանցը որքան ամուր կլինի։

Գլա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆ

—

Ուրմի 5 մարտ 95

Կարդալով «Շաւղի» № 4-ի առաջնորդողը, ես իմ կողմից պարտականութիւն համարեցի մի բացադրութիւն տալու ինձ ուղղուած կէտի մասին. որև խնդրում եմ յարգելի խմբագրութիւնից, տեղ տալ «Շաւիղի» մօտիկ համարներից մէկում ի գիտութիւն ընդհանուրի։

Ես միշտ եղել եմ ճշմարտութեան պաշտպան և կը լինեմ մինչև յաւիտեան։ Ես երբէք չեմ կարող մոռանալ և կամ ուրանալ տեսածս իրականութիւնը. թող վայեն բուեր ագռաւներ, ես պիտի ասեմ ճիշտն, պիտի խոստովանեմ անկեղծաբար որքան ինձ վիճակված է խօսելու, իմ քուէս տալու։

Ես դրել եմ այն, ինչ որ տեսել եմ ու լսել ժամանակին, աչքի առաջ չունենալով ոչ անձնաւորութիւն, ոչ կուսակցութիւն և ոչ քէն կամ ոխ և այսօր էլ կը գրեմ այն՝ ինչ որ նոր է, ինչ որ գոյութիւն ունի, ինչ որ ճշմարտութիւն է ու անհերքելի. ոչ ծամծմելով, ոչ վրան ստուեր ձգելով և ոչ չափազանցեցնելով։ Ես այն ժամանակ, երբ գործակալ քահանան մուտք գործեց Ուրմի, նախօրօք ծանօթ չը լինելով նրա հետ, պիտի գրէի ինչ որ տեսնում էի. ես ինչ գիտէի որ նա հաղած ունի ուրիշի վերարկուն, նա առած է իր վրայ ոչ-

մոր ճանապարհորդական ահագին դժուարութիւններ կան։ Արդաբիլից սկսում է չայնատարած դաշտի վրայով Աստարու ճանապարհը, որի աջ ու ձախ կողմում ընկած են 15-ի չափ թրքաբնակ գիւղեր, որոնցից վերջինը գտնվում է Աստարա լեռան ստորոտում, Նունաքարան անուամբ. այդտեղից սկսում է բարձրանալ լեռը մօտ 3 վերստ. լեռան գագաթից երևում է Կասպից ծովը և Աստարու գաւառը։

Նոյն լեռան բարձրից գլխավայր իջնում է ստորոտում գտնուած Աղմաշիթ գիւղն որտեղ լինում է ճանապարհորդների առաջին իջևանը։ Այս գիւղից սկսում է ճանապարհը գետափով մինչև Աստարա. թէ ինչպիսի նեղութեամբ, նկարագրելը անհնարին է. տեղ-տեղ ցեխ, տեղ-տեղ ժայռ. ժայռերի վրայով ձիերն այնքան անցուդարձ են արած, որ ժայռը ճեղքուած է մի արշին լայնութեամբ և նոյնքան էլ բարձրութեամբ, այնպէս որ ձիերն իրար մօտից անցնել չեն կարող. տեղացի սովոր ձիերն իրենց ոտների որոշեալ տեղերն ունեն, որոնք այնքան կոխուել են, որ քառորդ արշին փոս է ընկած. այսպէս շարունակվում է գետափով մինչև Աստարա, մօտ 6 մղոն տարածութիւն։ Ճանապարհի երկու կողմից բարձրացած են բարձրաբերձ անտառներ, որոնք կապ ունեն Ղարադաղի և Մաղանդարանի անտառների հետ։ Գետը բաժանում է պարսից և ռուսաց պահակատունը, որտեղ մնում են սահմանապահ զօրքերը։

Աստարան երկու է՝ պարսից և ռուսաց, որոնք բաժանվում են համանուն գետակով։

Պարսից Աստարան ունի 150 տուն, բոլորն էլ թուրք թալըշ անուանեալ ցեղից, որոնք ունեն իրենց յատուկ լեզուն որ շատ մօտ է պարսկերէնին։ Գաւառապետը նստում է Նամին կոչուած գիւղում։

Երկու Աստարի վրայով Ատրպատականից Ռուսաստան է արտահանվում մօտաւորապէս 150,000 հատ պարսկաստանի ապրանքներ. չամիչ, նուշ, բալգա, ծիրան, տեսակ տեսակ խէժեր, չոր պտուղներ, զորգեր և այլ տեսակ բերքեր։ Նոյնքան էլ Ռուսաստանից ներմուծվում է Ատրպատական չինեղէն, ֆոտոգէն, երկաթ, շաքար և այլն։

Ինչպէս որ Արդաբիլի գաւառը միայն արտադրում է ցորեն, այնպէս էլ Աստարի գաւառը արտադրում է միմիայն բրինձ այնէլ դոյնքան, որ տեղացիներին հաղիւ բաւականութիւն է տալիս. մուռացայ ասել որ առաջինում լինում է նաև մեծ քանակութեամբ ռուսաց Ցղթադրամի և պարսկական դրանի առևտուր. երկու գաւառն էլ չունենալով որ և է վաճառականական մթերք, չունին նաև վաճառականական տներ, այլ կան յանձնարարական տներ, որոնք երկու կողմից եկած ապրանքները միայն ընդունելով տալ են հասցնում։

Ռուսաց Աստարան ունի 10 տուն հաղեր, որոնցից երկուսը ռուսաց մաքսատան ծառայողներ են, 2-ը գինեվաճառ, 3-ը զինաղան գործերով են պարապվում և երեքն է կոմիսիոներութեամբ. վերջիններից իւրաքանչիւրը ունին 4—5 ծառայողներ։ Աստարու հայերի մէջ չը լայ լիովին ընկերական ոգի չը նայելով յանձնարարականների տարեկան մեծ շահերին. նրանք վարվում են իրար հետ շատ անհաշտ, ամբողջ տարիների ընթացքում իրար տներ գնալ չը կայ. օր չի լինիլ, որ երեքից երկուսը իրար հետ չը կռվեն։ Շատվատ են վարվում նաև իրենց ծառայողների հետ, որոնց արգելուած է իրար մօտ գնալ խօսելու։ Վերջիններիս մէկի հետ խօսելու բաղդն ունեցայ, որոյ խօսքերը զրելը աւելորդ չեմ համարում, ընթերցողին ցոյց տալու համար աղաների վարմունքը իրենց ծառայողների հետ և այդ ծառայողների կեանքը։

Մի օր ծովի ափը գնացի, տեսայ ափից փոքր ինչ հեռու ծովի վրայ կանգնած է մի շղենաւ, ափում հաւաքուած են ապրանքներ հակեր և այնտեղից նաւակներով փոխադրում են շղենաւը. հակերից փոքր ինչ հեռու վրանի տակ պառկած էր մի միջին հասակի, նիհար, աչքերը փոս ընկած, երեսի ոսկորները դուրս ցցած, դժգոյն երիտասարդ. մօտենալով երիտասարդին ասացի. «բարև ձեզ պարոն»։

Երիտասարդը ոչ խօսեց, ոչ էլ ընկած տե-

խարի մորթը, որ, ժամանակի ընթացքում պիտի վայր ընկնէր, պիտի պատռէր և դուրս տպը միջում եղածները. ինչպէս և եղաւ, որի համար ընթերցողը պիտի տեսնէ նրանից յետոյ ուղարկած յօդուածներս, որոնք նկարում են նրա ճիշտ իրական պատկերը։ Ես այն ժամանակ պատահեցայ նրա մի քարոզին, որ կարող էր լինել ուրիշի թխածը, ուրիշի եղներով վարածը. յայտնեցի իմ տեսածը նրա մասին և ցոյց տուեցի գործելու եղանակը, նրա բռնելիք ընթացքը, յանձնելով նրա գործը, նրա իրական պատկերը՝ ապագային, ընդունելով այն ճշմարտութիւնը թէ «չիք ինչ ծածկեալ,որ ոչ յայտնեսցի»։

Եւ նրանից յետոյ, երբ կեանքը ցոլացրեց նրա իսկական պատկերը, ես գրեցի նոյնութեամբ. այժմ էլ ես կասեմ այն՝ ինչ որ գոյութիւն ունի. օրինակի համար, ես չեմ համաձայնիլ այն մարդկանց հետ, որոնք կրթութիւն, ուսեալ բառը շատ նեղ են ըմբռնում. նրանք պարփակում են այդ բառի ընդարձակ նշանակութիւնը միայն գրել—կարդալ իմանալու մէջ, մոռանալով որ հազարաւոր գրող կարդացողներ կան, որոնք կրթեալ չեն և ոչ ուսեալ և հէնց այդ է պատճառը որ ես չեմ զիջանում ինձ, մի քանի մարդկանց պէս ասել,որգործակալը հասարակ ընթերցանութիւն չը գիտէ։ Այո, նա գիտէ և գրել, բայց թէ ուսեալ է—խնդիրը դրա մէջ է կայանում և այդ բառը ես երբէք չեմ գործածել նրա համար իմ և ոչ մի յօդուածում։ Ուրեմն թող չը կարծեն ոմանք թէ իմ № 48-ի թղթակցութիւնս մի մեծ գովասանութիւն է գործակալ քահանայի համար, և թող չկարծէ «Շաւղի» յարգելի խմբագիրը թէ ես զանազան ազդեցութեան տակ եմ գրել այդ իմ յօդուածս։ *)

Եւ մի ուրիշ բան. ես երբէք կախում չունեմ ոչ ոքից և ոչ մէկից չեմ սպասում ինձ համար մի օգնութիւն կամ մի պաշտօն, ուրեմն իմ յօդուածներս կարդացողները թող միշտ մտաբերեն, յիշեն, որ ես լինելով մի ազատ անկախ անհատ, գրում եմ այն, ինչ որ է.աչքի առաջ ունենալով ոչ թէ անձնաւորութիւն այլ ընդհանուր հասարակաց շահերը, անհատական և մարդկային անձեռնմխելի իրաւունքները։

Ե.

*) Խմբագրութիւնը այդպէս չէ կարծել. № 4-ի առաջնորդողումն էլ ասել է և այժմ էլ կրկնում է որ «գուցէ յօդուածագիրը սխալուել է»։ Տեսնում ենք որ դուք սխալուած էք եղել։ Ծ. Խ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան 28 մարտ. 95

Ամսոյս 26-ին, Ծաղկազարդի օրը, տեղի ունեցաւ «ազգային միացեալ հոգաբարձութեան» ընտրութեան քուէարկութիւնը։ Այդ ընտրելիք հոգաբարձութիւնը, որի նախագահը լինելու էր փոխանորդ վարդապետը, իբր թէ, պիտի իր իշխանութեան տակ առնէր Թէհրանի հայ դպրոցները։

Թողնելով ուրիշ հասարակութիւններ, Թէհրանի մասին—հակառակ շատերի կարծեաց—պնդումեմ որ եթէ կայ մի ճանապարհ, որով երբէք ընթացել են հասարակական գործերը, այդ ճանապարհն է եղել ազնիւ կուսակցական ոգու ստեղծածը կամ ստեղծելիքը։ Ժողովուրդն այստեղ կարող է զարգանալ և ինքն իրեն կառավարել այն ժամանակ միայն, երբ նա շփում կունենայ կուսակցութիւնների միջոցաւ, երբ նա մի կողմի ճշմարտութեան և միւսի կեղծութեանն ականատես լինելով,ինքը կը կործանի սխալը և կընդունի ճշմարիտը։

Հապիւ թէ այդ ճանապարհի մէջ էին մտել մեր գործերը (միայն կրթականը ի հարկէ) երբ մի քանի անձնաւորութիւնք պլանը փոխեցին և կամեցան դասալիք շինել մրցողներին, իրենք այլ ևս զերծ մնալ կամենալով պատասխանատուութիւնից՝ կուսակցութեան առջև։ Այդպիսով նրանք սարքեցին, շտկեցին և ստեղծեցին այն զարմանալի Ազգային հոգաբարձութիւնը, որ կոչւած էր միմիայն «լոկ անուամբ» հոգաբարձութիւն ա՛ելու։ Այս կիրակի էլ, որպէս ասացի, եղաւ նոյնատեսակ մի ընտրութիւն, տը նոյնքան ծիծաղելի էր, որքան անցեալը։

Արժ. Տեղապահը, անցեալ տարւայ իր արած ընտրութիւնը իւր մէկ քարոզով գտնելով իբր առաջին՝ և հետևապէս սխալ ու զեղծումներով լիքը, ասաց որ չ'արժէր նրանց ուշադրութիւն դարձնել. չը լինի թէ այս անգամ էլ չը կամենալով որ ուշադրութիւն դարձնեն, ուզեց փոխել ընտրութեան ձևը Ծածուկի։ Նա նամակներ ցրուեց հասարակութեան առանց նախապատրաստական մի ժողովի, որով ունենար չը հրաժարուող և ժողովրդի ցանկութեան համեմատ ընտրելիների մի ցանկ և հրաւիրեց որ 9 հոգու քուէ տան կամ իրենց քուէները բերելով և կամ նամակով ուղարկելով։ Ես էլ անձամբ իմ քուէս տարայ և մտածել էի որ պիտի գտնեմ անշուշտ մի փակ սնդուկ. բայց ի՞նչ. տեսնեմ արժ.հայրը նստել է մի բաց տուփի մօտ և իր կողքին է նստեցրել երկու ինքնտիր քուէահամար անողներ, որոնք անցեալ տարւայ ընտրելեաց ցանկը կազմող պարոններից աւելի ընդունակ չէին...

Այդ տեսակ քուէարկութեան արդիւնքը դեռ որոշ յայտնի չէ, բայց որքան որ լսում ենք *) երեք հարիւր ցրւած նամակներին պատասխանել են միայն 96 անձինք և եթէ երբէք սպիտակ քուէներ էլ եղած չը լինէին, ուրեմն այդ փոքրամասնութեան քուէներով է որ ընտրուել են 5 հոգիներ, անձեր, որոնցից էլ կազմւած էր անցեալ «ազգային» և «լոկ անուամբ» միայն հոգաբարձութիւնը։

Թէ ի՞նչու ուրեմն հայը սուրբը ժողով չը կազմեց, ինչո՞ւ փոխանակ այդպէս երևակայական ընտրութիւններով զբաղուելու, չ'աշխատեց նա պակասը լրացնելու... հարցնող չը կայ. հայը սուրբն էլ իրեն բոլորովին պարտաւոր չէ ճանաչում որևիցէ մէկին հաշիւ տալու։

Ինչ որ է, իմ ասելիքս դեռ ևս քուէարկութեան ձևի մասին չէ։ Արժ. հայրը ոչ թէ պիտի ձեռնարկէր էլի մի անյաջող փորձի, այլ նրա հոգսը պիտի լինէր կազմակերպելու այն հոգաբարձութիւնը, որը ինքը քանդեց անցեալ տարի և էլի նրան յանձնէր գոնէ այն գործերը, որոնք չէին կարող կառավարուել գործին վնասել կամեցող անձերի ձեռքով. աւելի ուշ նա միայն, եթէ ընդունակութիւն ունի, պիտի ծրագիր կազմէր միութիւն հաստատելու ոչ թէ կուսակցութիւնների մէջ (որ անհնար է), այլ երկու դպրոցների ծրագրի և բիւդջէի մէջ։ Որովհետև, եթէ ենթադրենք որ ընտրւի մի հոգաբարձութիւն՝ կազմւած երկու կուսակցութիւնից էլ, անշուշտ նրանց ժողովները կը դառնան մի մշտական կուսատեղի և նրանք այնքան կը գործեն, որքան անցեալ տարւայ ընտրւած «ազգ.» հոգաբարձութիւնը. այսինքն ոչինչ. այլ ընդհակառակն զօրեղ մասը կ'աշխատի ճնշել միւսին և փակել տալ հակառակ կողմի դպրոցը։ Փորձը այդ ցոյց տուաւ. չէ՞ որ եթէ ուսուցիչները չը լինէին, Հայկազ.դպրոցը այս տարի հէնց յունվարից սկսած,փակւելու էր,քանի որ այդփակւելուն նպաստում էին նոյն իսկ դպրոցի հոգաբարձութեան մէջ եղած անձնաւորութիւններ հակառակ կուսակցութիւնից

Այս ամենից երևում է որ վարդապետը կամ ձեռքից տուել է կծիկի ծայրը և աշխատում է օտարների անձնական շահերի համար և կամ թէ անընդունակ է Թէհրանում իւրաքանչիւր գործ իր պահանջած յարմարութեամբը կառավարելու մէջ։ Եւ որովհետև եղած ընտրութիւնը անշուշտ ոչընչանալու է, աւելի յարմարագոյնն էլ անիրագործելի է, որովհետև լոյսը խաւարի հետ հաշտուելու պէս անկարելի է նաև որ երկու կուսակցութիւնները կամենան միանալ առանց իրարու վնասելու... ուստի ուրիշ ոչ մի միջոց չը կայ, եթէ ոչ հրաւիրել Հայկ. դպրոցի կուսակցութեան կազմալուծեալ անդամներին, համախմբել նրանց, յորդորել որ ձեռք առնեն նորից իրենց գործերը և ճակատելով անպատեհութիւնների՝ քաջաբար գործեն։ Եթէ երբէք կուսակցութեան լուծւած հոգաբարձուների մէջ մնացել էդեռ անձնասիրութեան նշոյլ, նրանք պարտաւոր են այլ ևս մի բոպէ իսկ չը չը կորցնել, միանալ շուտով. դպրոցը ձեռք առնել և ցոյց տալ որ գիտեն դէմ դնել զանազան անձերի խաւարային ջանքերին։ Իսկ ապագան ցոյց կը տայ երկու կուսակցութիւնների շփումից և մրցումից ծագելիք արդիւնքը։

Մ. Յ. Եղիազարեանց

*) Թղթակցի լսածը ճշտութիւնն է. Ծ. Խ.

դից շարժւեց։

—Բարև ձեզ պարոն, երկրորդեցի ես. ինչու՞ չէք խօսում։ Երիտասարդը միայն գլուխը փոքր ինչ բարձրացնելով ասաց—է՞հ, ինչ խօսեմ, Աստուծոյ բարին քեզ։

—Ի՞նչ էք անում այստեղ։

—Ապրանք եմ բարձում շոգենաւին. ասաց նա նստելով իր մօտ դրած քարի վրայ և մէջքը կռթնեցնելով վրանի սիւնին.

—Ո՞ւմն է այդ շոգենաւը։

—Չը գիտեմ

—Իսկ ապրանքը։

—Ապրանքը մեր խազէինինն է։

—Ո՞վ է ձեր խազէինը։

—Դավրէժցի է, չէք ճանաչիլ...Երիտասարդի խօսքը ընդմիջեց ծովի ափում հակերի մօտ կանգնած թուրք մշակապետը կոչելով՝ «միրզայ, եկ համարիր հակերը, նաւակին բարձենք»։

—Է՞հ, յիմար թուրք, ասաց նիրհած երիտասարդը թուլացած և արհամարհական ձևով. իմ գլուխս շարժ է գալիս սա ինչ է ասում. քաղցածութիւնը մի կողմից, արևի տաքութիւնը միւս կողմից գլխումս խելք չեն թողել, սա էլ մի կողմից է գլուխս տանում։

—Մաշադի՛, մաշադի՛, արի մենք համարենք նաւակին բարձենք, յետոյ կասենք միրզան կը գրի տետրակում, այժմ յոգնած է, գոչեց մշակներից մէկը՝ մշակապետին։

—Պարոն միթէ դեռ ճաշած չէք, ժամ 12-ն է արդէն։

—«Է՞հ, հէր օրհնուած, ժամ 12-ն է, մենք 10-ին հագիւ թէ առաւօտեան թէյ ենք խըմում, ճաշն էլ ով գիտէ երբ պիտի տան»։

—Ո՞վ է տալիս ձեր ճաշն և կամ ինչու այսչափ ուշ։

—Մեր խազէինն է տալիս և որովհետև մեր տիկինն առաւօտները շատ ուշ է զարթնում, իսկ առանց նրան ոչ ոք իրաւունք չունի ուտելու, խմելու, եփելու, դրա համար էլ այս չափ ուշանում է, խօսեց երիտասարդը ուժասպառ։

—Բա այդպէս քաղցած, արևի տաքին ինչպէս էք գործում։

—Հողը գլխին ենք գործում, անցեալ օրն այստեղ շոգենաւին բեռ էի տալիս, քաղցից գլուխս դարձեալ շարժ էր գալիս, տետրակումը փոխանակ 55 գրելու. 5 էի գրել. լաւ էր որ գիշերը ամբարի հաշւով իմացայ ապա թէ ոչ 50 հակը կորած էր և ով գիտէ քանի անգամներ այդպէս չէ պատահում. իսկ պարսկաստանից եկած հակերը ընդունողը օրը որքան է կորցնում—հաշիւ չը կայ. այն օրն էլ քաղցից թուլացած ընկած էր. մշակներն են բերել տուն հաղորդել»։

—Այդ վնասները որ դուք անում էք ո՞վ է տալիս։

—«Մեր խազէինը, քանի որ մեզ լաւ չէ կերակրում»։

—Լաւ, դուք չէք կարող առանձին կերակրվել։

—Է՞հ, եթէ առանձնանանք, ըստ սովորութեան իւրաքանչիւրիս պիտի 15 ր.տայ. բայց մեր աղան յիմար է, որ այդպէս անէ, բանի որ 15-ով 5-իս է կերակրում. բացի դա. մենք իրաւունք էլ չունենք մի ընկերի հետ խօսելու. մեր տէրերն արգելում են, վախենալով որ մի գուցէ իրենց վատութիւններն ասենք. բայց մենք.... է՞հ մենակ մենք ենք. բոլորն, բոլորն էլ»...

Մեր խօսքը ընդհատեց մշակապետը գոչելով. «միրզայ, խազէինը եկաւ, վեր կաց։»

Երիտասարդը շփոթուած ետ նայեց և տեսաւ մի մարդ որ ձեռնափայտը խաղացնելով գալիս էր. յետոյ դարձաւ ինձ աւելի շփոթած կերպով և ասաց «Խնդրում եմ, խնդրում եմ շուտով հեռացէք այստեղից, որ չը տեսնէ խազէինս և չիմանայ որ այստեղ էք եղել, ապա թէ ոչ ինձ սաստիկ կը պատժէ»։ Այս ասելով նա վազեց դէպի մշակները և հակերի մօտ հասնելով՝ սկսեց մատներով համարել։

Բ. Տէր-Սարգսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խնդրում են մեզ յայտնել հրապարակով՝ հետեւեալը: «Թիֆլիզից, վիպասան պ. Պերճ Պռօշեանը 1892 թիւ փետր. 24-ին, Թէհրանի Րաֆֆի ընկերութեան գանձապահ պ. Վահան Մեսրոպեանին յանձնել է 4 կտոր իր հեղինակութիւններից, ընծայելու համար «Ընթերցասիրաց» ընկերութեան գրադարանին: Այժմ պ. Պերճ Պռօշեանի յանձնարարութեամբ տուգելով, գտնվում է, որ այդ գրքերից և ոչ մէկը չէ յանձնուած յիշեալ ընկերութեան գրադարանին, քանի որ նրա և ոչ մէկ ցուցակում չէ արձանագրուած և գրքերի մէջն էլ չը կայ: Հարց է այժմ թէ ինչ իրաւամբ պ. Մեսրոպեանը իր մօտն է պահել 3 տարուց իվեր այդ գրքերը: Եթէ պ. Մեսրոպեանը չէ կամենում արդարացնել իր պատիւը, հրաւիրում ենք նրան հրապարակով, բացատրութիւն տալ այդ մասին»: «Շաւիղը» յայտնում է, որ պ. Մեսրոպեանի բացատրութիւնը կը տպագրէ, պայմանաւ որ նա կարճ գրած լինի և առանց ծամծմելու:

—

Վանաք գիւղը զրկւելով կանոնաւոր ուսուցչից, այժմ գտել է իր համար մի աւելի քան տիրացու արարած, նրա ձեռքով տանջելու համար իր որդիները: Այդ գիւտը արել է գիւղի քահանան, աւելի լաւ ընտրութիւն մի այդպիսի քահանայի կողմից՝ սպասելի էլ չէր, որովհետև «նման զնմանիսն սիրէ»:

—

Վերջապէս կայացաւ փոխանորդ վարդապետի երազած ընտրութիւնը: Թէհրանը ունեցաւ ազգային Հոգաբարձութիւն 5 հոգուց բաղկացած, որոնց մէկը «լոկ անունով» է սիրում հոգաբարձու լինել, մէկն էլ շուտով կը հեռանայ քաղաքից, իսկ միւս երեքը այնքան հասկացողութիւն ունին կրթական գործի մասին, որքան մի խուլ՝ երաժշտութեան մասին: 300 քուէարկողներից քուէ տացել են 96 (դեռ չենք հաշւում սպիտակ քուէները), հետեւապէս, ըստ օրինի, ընտրութիւնը անվաւեր է ներկայանում. ուրիշ հարց է ի հարկէ, եթէ վարդապետը «կամենայ», որ վաւերական համարւի: Ուրեմն ինչ արդիւնք այդ քուէարկութիւնից. չէ որ վարդապետը կամենում էր միութիւն կազմել. ահա ունեցաւ 5 հոգաբարձուներ, որոնցից 4-ը հակառակ կուսակցութեան— խաւարամիտներին պատկանելով՝ պիտի աշխատեն փակել տալ Հայկազ. դպրոցը և կամ իրենց հասկացած լուսովը լուսաւորել նրան, իրենց «անփոխարինելի» մանկավարժի շնորհիւ: Մենք ասել էինք որ անտեղութիւններ պիտի պատահեն. մեր ասածը իրականացաւ և փոխանորդ հայր սուրբը մի անգամ ևս ապացուցեց որ անընդունակ է այդպիսի գործերում:

—

Դավրէժից մեզ գրում են հետեւեալը: »Մի քանի օր առաջ տեղի ունեցաւ Լիլավայի թաղում մի ընդ. ժողով, հանդստարանի համար նոր հոգաբարձուներ ընտրելու. ընտրւելուց յետոյ, նոր հոգաբարձուները ձեռքերին առած մի տետրակ, ման են գալիս և փող հաւաքում մեռեալների բնակարանը մեծացնելու և զարդարելու համար: Խորհուրդ ենք տալիս այդ պարոններին որ փոխանակ մեռեալների վրայ մտածելու, թող մտածեն կենդանիների վրայ և չը թողնեն նրանց մեռնելու. այդ փողերով որ մսխվում է մեռեալների վրայ, կարելի է հարիւրաւորների կեանք ազատել»: Կատարեալ իրաւացի դիտողութիւն:

—

Նոյն տեղից գրում են որ մի խեղճ վաճառական Պօղոս անունով, Մարաղայից Րովուշ գիւղը գնալիս սպանվում է աւազակներից:

—

Ուրմիայից ստացանք մի երկար գովասանք այնտեղի առաջ. փոխանորդ քահանայի մասին. այդ այն քահանան է որ աւերածութիւններ է անում Ուրմիոյ գաւառի մէջ: Մեր ստացած նամակը այնքան գովում է քահանային, որ քիչ է մնում կարծել տայ թէ այդ քահանայի պէս «հրեշտակ և ժողովրդասէր» անձ չը կայ հայերի մէջ: Նամակը ստորագրուած է. «ի դիմաց հայ հասարակութեան՝ Գ. Հայկունի», Ո՞վ է այդ Հայկունին և ինչ իրաւունքով է հասարակութեան կողմից ստորագրում: Մեր թղթակիցներին խնդրում ենք յայտնել մեզ այդ մասին, իսկ Հայկանուն յայտնում ենք որ չենք կարող հաւատ ընծայել որ իր ուղարկած նամակը Ուրմիոյ հայերի ձայնն է արտայայտում, քանի որ նամակի տակ, ուրիշ ոչ մի ստորագրութիւն չը կայ և իրեն էլ մենք չենք ճանաչում: Ի դէպ է ասել որ մեր թղթակիցը յայտնում է թէ քահանան աշխատում է ստորագրութիւններ ժողովել իրեն գովասանող թղթի տակը, բայց չէ յաջողվում:

—

Հանդէս Ամսօրեայի խմբագրութիւնը յայտարարում է հայ բանասէրներին, որ ձեռնարկել է տպագրել բոլոր տեղերում գտնւող հայերէն ձեռագիրների մի ցուցակ, որ կը լինի 1000 երես. բաժանորդ գրւել կամեցողը կարող է դիմել Rédaction «Hantess», Vienne, (Autriche VII/2. Mechitharisteng. 4:) Ցուցակը կը հրատարակւի նոյ. 1-ին. Հայր Այտնեանի (միաբանութեան աբբահօր) 50-ամեայ յօբելեանի օրը: Ցուցակի բաժանորդութիւնը արժէ 41 Ֆրանկ:

—

Կովկասի թերթերի մէջ ծագել է մի ծիծաղելի վիճաբանութիւն Կ. Պոլսի նոր պատրիարքին հերոսացնելու կամ չը հերոսացնելու մասին. պահպանողական թերթերը գտնում են որ նրան անպատճառ հարկաւոր է հերոս կոչել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մարտ 5-ին Խնֆլուէնցիայից մեռաւ յայտնի արեւելագէտ Րաուլինսօնը:

—Բէռլինի մագործները իշխան Բիսմարկին ընծայել են իրենց համբաչութեան պատւոյ անդամ: Բիսմարկը ընդունել է այդ կոչումը:

—Կովկասի ամէն կողմում սկսել են աւազակութիւններ. Ձուշիի շրջակայքում 3-4 հայեր են մորթել, իսկ Ուջարի կայարանում մեծ աւազակութիւններ կատարւել:

—Թէև հեռագիրը հաղորդել էր որ պ. տը Սթալն է նշանակւելու Ռուսական արտաքին գործոց նախարար, բայց նա հրաժարւեց և այժմ մինիստր նշանակւած է իշխան Լօբանովը:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Եօկահամա. 1 ապրիլ. (Ն. տ.) Այն երիտասարդ ճապոնացին Կոյամա անունով, որ սպանութեան փորձ էր արել Լիհունգ Չանգի վրայ, դատապարտւեց ցկեանս տաժանակիր աշխատութեան:

Բերլին. 1 ապրիլ. Ամբողջ Գերմանիայում տօնախմբւել է երէկ Բիսմարկի 80-ամեայ տարեդարձը. ամենից աւելի շքեղութեամբ տօնեցին Բերլինը և Համբուրգը, որոնք ամբողջ գիշերը լուսավառութիւն էին անում:

Լոնդոն. 2 ապրիլ. Սըր Գրէյ յայտնեց ժողովում, որ Պամիրի հարցի մասին եղած համաձայնութիւնը ռուսների հետ՝ վերջացել է:

Լոնդոն. 2 ապրիլ. Անգլիական «Բրիկըրն» անունով շոգենաւը, որ վարձւած Ֆրանսիայից, տանում էր գետային պատերազմական նաւեր Ֆրանսիական ծառայութեան համար Մադագասկարում, Սեկիլիայի մօտ կըպնելով մի անգլիական նաւի, սաստիկ վնասւել է: Ֆրանսիական թերթերը շատ յուզւած են և միաձայն վերագրում են այդ դէպքը՝ անգլիական չարամտութեան.

Լոնդոն. 4 ապրիլ. Բալֆուրը խօսելով բիմետալիզմի դաշնակցութեան միտինգի մասին, ասեց որ Հնդկական դըրամական սիստեմը պարունակում է իր մէջ հարկ եղած յարմարութիւնները: Նա ասեց որ դրամական սիստեմի մի ընդհանուր փոփոխութիւն կարեւոր է, բայց անկարելի է Անգլիային միայնակ գործել այդ բանում:

Փարիզ. 6 ապրիլ. Արտաքին գործոց նախարարը սենատում երէկ խօսելով Սըր Գրէյ անգլիական արտաքին գործոց նախարարութեան պարլամենտում խօսածների մասին, պախարակեց նրա այն ակնարկները, թէ Ֆրանսիական և անգլիական յարաբերութիւնները կարող են վնասել տակաւ մնացած բանակցութիւններին: Նախարարը յայտնեց որ ոչ մի լուրջ հարց չը կայ Աֆրիկէի մասին Անգլիոյ և Ֆրանսիայի մէջ. նա յայտնեց որ հաստատ է թէ երկու երկրները պիտի յարգէին իրենց փոխադարձ շահերը: Այդ հեռագիրը յայտնում է նաև որ նախարարը ազդարարեց թէ Ֆրանսիան չի կարող ճանաչել Արքայական Նիգերի ունեցած պահանջները. Ֆրանսիան միայն Թրքա-եգիպտական իրաւունքներն է ճանաչում Նեղոսի հովիտում: Միևնոյնը հարց աւաւ Անգլիայի որոշելու իր ազդեցութեան եղած սահմանը այդ երկրներում: Որոշ պատասխան չէ ստացւել: Ֆրանսիան չէ հաշտվում ուրեմն ներկայ դրութեան հետ և իրեն ազատ է զգում գործելու: Չը նայելով այդ բոլորին, մինիստրը հաւատում է, որ երկու պետութիւնները եթէ յարգեն Խտիվի իրաւունքները, այն ժամանակ փոխադարձ շահերի մէջ հաշտւելու միջոցներ կարող են գտնել:

Եօկահամա. 9 ապրիլ. Խաղաղութեան պայմանները ճապոնի և Չինաստանի մէջ, Սիմօնօսեկիում, հանդարտութեամբ առաջ են գնում: Ինչպէս լսվում է պայմանները պարունակում են հետեւեալներն ևս. 1) Կորէայի անկախութիւն, 2) Հարաւային Մանջուրիայի, որի հետ և պօրտ Արտուրը, նաև Ֆորմօզան՝ կը մնան-ճապոնիային. 3) Չինական նաւահանգիստներն ու գետերը բաց կը լինին արտաքին վաճառականութեան առջև 4) Չինաստանը 500 միլիոն են կը վճարի ճապոնին որպէս պատերազմական տուգանք. և գրաւած պատերազմական կէտերը կը մնան ճապոնացոց ձեռքում, մինչև որ այդ տուգանքը ստացւի:

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Խոյ. Տօնօ. Եթէ յօդուածը կարճ է, ուղարկեցէք. թղթակցեցէք, միայն ամփոփ գրել խնդրում ենք:

Թիֆլիս. Փ. Վարդազարեան. Ստացա՞ք, յայտարարութիւնը կը տանք, եղածները ծախելուց յետոյ եթէ էլի պէտք եղաւ, կը գրենք ձեզ:

Դավրէժ. Ա. Տէր-Ստեփանեան. Ձեր յօդւածը տպագրելու չենք. ձեր տրամաբանութեան հետ համաձայն չենք. յօդւածը չենք կարող ետ ուղարկել. 3 թերթից պակաս յօդւածները ետ չեն ուղարկվում: Գրեցէք առաքելութիւնների վրայ:

Համադան Յ. Յակովբեան: Կարծել էք թէ ձեր ուղարկած նամականիշները 2 դահանոց են, բայց 1 անոցներ են և 4 հատ, ուղարկեցէք էլի 4 դահանի:

Ուրմի. Ե. Գրեցէք մեզ մի քիչ էլ տեղւոյն հայ բողոքական հասարակութեան մասին: Ձեր յօդւածները կը տպւեն:

Կարս. Գուրգէն Միսակեանց. Թերթի մէջ ոտանաւորներ տպել չենք կարող ոչ մի դէպքում. ձեր ասած խնդիրների մասին կարող ենք տպել. ուղարկեցէք յօդւածը:

Արտօնատէր—Հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՕՐԻԶՈՆ

Հրատարակութեամբ Փ. Վարդազարեանի

Լոյս տեսաւ ա. գիրքը և ծախվում է 1 բուբլիով: Պարսկաստանից կարող են դիմել «Շաւիղի» խմբագրութեան, ուղարկելով 6 ղրան:

1—3

Երկու տարի է որ եղբայրս Դաւիթ Ջահվերդեան, երբեմն Նազարբեկեան անունով, անհետացել է. խնդրում եմ, եթէ ով և իցէ անձնաւորութիւն իմանում է նրա տեղը, ինձ իմաց տայ «Շաւիղի» միջոցով, մինչև իսկ եթէ մեռած լինի: Նրա կերպարանքը սա է. 20 տարեկան, սև աչքերով, լիք և կարմիր երեսով. սև մազերով մի երիտասարդ է, ինքն էլ Դաւրիժեցի: Որով պարտաւորեցած՝ շնորհակալութիւն կը յայտնեմ «Շաւիղի» միջոցով:

Դիմիտրի Ջահվերդեան

2—3